© 2021. Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից:

© 2021. Նկարազարդումը՝ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ:

Ծրագրի տնօրեն՝ Էդգար Խաչատրյան

Հարցերի համար դիմել Մարիաննա Խաժակյանին,
էլ. հասցե՝ khazhakyan.marianna@peacedialogue.am:

2020 թվականին Լեռնային Ղարաբաղի դեմ լայնածավալ զինված հարձակման հետեւանքով տեղահանված ընտանիքների կարիքների գնահատում

Ամփոփիչ զեկույց

Աշխատանքային խումբ՝

Արմինե Զաքարյան
Մարիաննա Խաժակյան
Անուշ Հարությունյան
Լուսինե Պողոսյան
Շուշանիկ Իսահակյան

Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Կոնտակտ 2.0» ծրագրի շրջանակներում:

Ծրագրի գերմանական գործընկերն է՝ «Օվեն» հկ-ն
(OWEN – Mobile Akademie für Geschlechterdemokratie und Friedensförderung e.V.):

«Կոնտակտ 2.0» ծրագիրն իրականացվում է Գերմանիայի դաշնության արտաքին մշակութային կապերի ինստիտուտի (ifa) “zivik” ծրագրի աջակցությամբ՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով:

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Խաղաղության երկխոսություն» հկ-ն: Այն չի արտացոլում Գերմանիայի դաշնության արտաքին մշակութային կապերի ինստիտուտի եւ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության տեսակետները:

Վանաձոր, 2021

2020 թվականին Լեռնային Ղարաբաղի դեմ լայնածավալ զինված հարձակման հետեւանքով տեղահանված ընտանիքների կարիքների գնահատում

Ամփոփիչ զեկույց

Աշխատանքային խումբ՝

Արմինե Զաքարյան
Մարիաննա Խաժակյան
Անուշ Հարությունյան
Լուսինե Պողոսյան
Շուշանիկ Իսահակյան

© 2021. Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից:

© 2021. Նկարազարդումը՝ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ:

Ծրագրի տնօրեն՝ Էդգար Խաչատրյան

Հարցերի համար դիմել Մարիաննա Խաժակյանին,
էլ. հասցե՝ khazhakyan.marianna@peacedialogue.am:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002, ք. Վանաձոր;
Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am; mailbox@peacedialogue.am
Կայք՝ http://www.peacedialogue.am; http://www.safesoldiers.am

PEACE DIALOGUE

Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության **«Կոնտակտ 2.0»** ծրագրի շրջանակներում:

OWEN

Ծրագրի գերմանական գործընկերն է՝ «Օվեն» հկ-ն (OWEN – Mobile Akademie für Geschlechter-demokratie und Friedensförderung e.V.)

ifa Institut für Auslandsbeziehungen

Federal Foreign Office

«Կոնտակտ 2.0» ծրագիրն իրականացվում է Գերմանիայի դաշնության արտաքին մշակութային կապերի ինստիտուտի (ifa) “zivik” ծրագրի աջակցությամբ՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով:

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Խաղաղության երկխոսություն» հկ-ն: Այն չի արտացոլում Գերմանիայի դաշնության արտաքին մշակութային կապերի ինստիտուտի եւ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության տեսակետները:

Վանաձոր, 2021

Բովանդակություն

05 Ուսումնասիրության համառոտ նկարագիր

07 Ուսումնասիրության կառուցվածք եւ ընտրանքի նկարագիր

09 Ուսումնասիրության արդյունքները

23 Եզրակացություններ

28 Առաջարկություններ



Ուսումնասիրության համառոտ նկարագիր

2020թ-ի սեպտեմբերի 27-ին ադրբեջանական զինված ուժերը հրթիռահրետանային եւ ռազմաօդային միջոցների կիրառմամբ լայնածավալ հարձակում նախաձեռնեցին ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի ամբողջ երկայնքով: Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում հայտարարվեց ռազմական դրություն եւ ընդհանուր զորահավաք: Քառասունչորս օր տեւած ծանր ու արյունալի մարտերն ավարտվեցին նոյեմբերի 10-ին Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ ստորագրված կրակի դադարեցման մասին եռակողմ համաձանագրով (Ռուսաստան, Ադրբեջան եւ Հայաստան), ըստ որի՝ հակամարտող կողմերը մնացին այն դիրքերում, որտեղ գտնվում էին մինչեւ զինադադարի ստորագրման պահը: Այս համաձայանգրով նաեւ սահմանվեցին ժամկետներ, որոնց ընթացքում հայկական կողմը պարտավորվեց դուրս բերել հայկական զինված ուժերը Լեռնային Ղարաբաղին հարող ադրբեջանական 7 շրջաններից: Պատերազմի արդյունքում եւ ստորագրված համաձայնագրով ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ անցան նախկին ԼՂԻՄ-ի վարչական տարածքի մեջ մտնող Հադրութի շրջանը (բացի Հին Թաղեր եւ Խծաբերդ գյուղերից, որոնց ճակատագիրը, սակայն, փոխվեց մեկ ամիս անց՝ դեկտեմբերի 13-ին տեղի ունեցած միջադեպից հետո, ինչի արդյունքում վերջիններս հայկական վերահսկողությունից դուրս են հայտնվել Ռուսաստանի հրապարակած խաղաղապահների վերահսկողության նոր քարտեզում), ինչպես նաեւ Շուշի քաղաքը՝ հարակից գյուղերով: Արդյունքում՝ ընդհանուր առմամբ 120 բնակավայրեր, որոնք բնակեցված էին հայերով, անցան ադրբեջանական կողմի վերահսկողության տակ, իսկ Լեռնային Ղարաբաղում տեղակայվեցին ռուսական խաղաղապահ ուժեր:

Պատերազմի առաջին իսկ օրվանից վերոհիշյալ բնակավայրերից, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի մյուս համայնքներից, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտից, հազարավոր բնակիչներ տարհանվեցին եւ տեղափոխվեցին Հայաստան՝ ապաստան գտնելով հանրապետության մարզերի տարբեր բնակավայրերում:

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից՝ պարզելու 2020թ-ի սեպտեմբերի 27-ին Լեռնային Ղարաբաղի դեմ լայնածավալ զինված հարձակման արդյունքում տեղահանված անձանց կարիքները: Ուսումնասիրության նպատակն է պարզել մարդու իրավունքների (այդ թվում՝ կյանքի, սեփականության, առողջության, կրթության), իրավական, գենդերային եւ խաղաղասիրության ոլորտներին առնչվող այն խնդիրները, որոնց ԼՂ բնակիչներն առերեսվել են տեղահանվելիս եւ ապա ժամանակավոր կամ մշտական բնակություն հաստատած վայրերում գտնվելու ընթացքում:

Ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են ներքոհիշյալ բնույթի հարցերը.

Տարհանման գործընթաց

- Ո՞վ է կազմակերպել, եւ ու՞մ օգնությամբ է իրականացվել հարցվողների տարհանումը:
- Հնարավորություն ունեցե՞լ են արդյոք տեղահանված ընտանիքները վերամիավորվել ընտանիքի այն անդամների հետ, ովքեր իրենց հետ չեն եղել Հայաստան տարհանվելիս:

Բոլոր տեսակի փաստաթղթերի հասանելիություն եւ իրավական ասպեկտներ

- Արդյո՞ք տեղահանված անձինք հնարավորություն ունեցել են տարհանման ժամանակ իրենց հետ վերցնելու անձը հաստատող կամ այլ տիպի փաստաթուղթ/եր, արժեքավոր իրեր եւ հագուստ:
- Արդյո՞ք տեղահանված անձինք ստացել են որեւէ կարգավիճակ եւ այդ կարգավիճակն ամրագրող որեւէ պաշտոնական փաստաթուղթ:
- Արդյո՞ք տեղահանված անձինք իրենց ներկայիս բնակության վայրում առերեսվել են իրավական բնույթի խնդիրների:

Սոցիալ-տնտեսական իրավիճակ

- Արդյո՞ք ռազմական գործողությունների արդյունքում վիրավորում ստացած, մահացած կամ անհայտ կորած համարվող ընտանիքի անդամ ունեցող ընտանիքները ստացել են պատշաճ պետական աջակցություն:
- Ինչպիսի՞ առողջապահական, կրթական եւ սննդի ծառայություններ են ստացել տեղահանված ընտանիքները Հայաստանում ժամանակավոր կամ մշտական բնակություն հաստատած վայրում:
- Արդյո՞ք տեղահանված անձինք ունեն աշխատանք կամ զբաղվում են որեւէ այլ տիպի տնտեսական գործունեությամբ: Ո՞րն է նրանց ներկայիս եկամտի աղբյուրը:

Պատերազմի ազդեցությունը տեղահանված անձանց վրա

- Արդյո՞ք տեղահանված ընտանիքների անդամների մոտ դիտարկվել են հոգեբանական բնույթի խնդիրներ:

Հեռանկարներ եւ առաջիկա գործողություններ

- Արդյո՞ք հարցվողները մտադիր են վերադառնալ իրենց նախկին բնակավայրեր (եթե դա հնարավոր է) կամ բնակության հաստատել ԼՂ մեկ այլ բնակավայրում:
- Արդյո՞ք հարցվողները հնարավոր են համարում հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների համատեղ կեցությունը մոտ ապագայում կամ ավելի ուշ:
- ԼՂ հակամարտության վերջնական կարգավորմանն առնչվող ի՞նչ ակնկալիքներ ունեն հարցվողները:
- Որո՞նք են այն հիմնական խնդիրները, որոնց հարցվողները առերեսվել են կամ հնարավոր է՝ կառերեսվեն որպես կին կամ տղամարդ:

Ուսումնասիրության կառուցվածք եւ ընտրանքի նկարագիր

Ըստ դիտարկումների՝ ՀՀ Լոռու եւ Տավուշի մարզերի տարբեր բնակավայրերում ապաստան են գտել մի քանի հազար տարհանվածներ: Սույն ուսումնասիրությունն իրականացվել է վերոհիշյալ մարզերի մի շարք բնակավայրերում (այդ թվում՝ Վանաձոր, Սպիտակ, Դիլիջան քաղաքներում, ինչպես նաեւ Սպիտակ, Վանաձոր եւ Ստեփանավան քաղաքներին հարակից գյուղերում) բնակություն հաստատած երեսունութ (38) ընտանիքների ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցների հիման վրա, որոնք իրականացվել են չորս (4) ֆոկուսխմբային հարցազրույցների շրջանակներում: Հարցմանը մասնակցել է յուրաքանչյուր ընտանիքից մեկական ներկայացուցիչ: Այսպիսով՝ սույն ֆոկուս խմբային հարցազրույցների միջոցով իրականացվել է պատերազմի արդյունքում տեղահանված երեսունութ (38) ընտանիքի (միջին հաշվով՝ շուրջ երկու հարյուր քսանութ (228) մարդու) կարիքի գնահատում:

Ֆոկուս խմբերը ձեւավորվել են կանանց եւ տղամարդկանց տարբեր տարիքային խմբերի, ինչպես նաեւ պատերազմի արդյունքում Լեռնային Ղարաբաղի հսկողության տակ մնացած եւ Լեռնային Ղարաբաղի հսկողությունից դուրս գտնվող բնակավայրերի բնակիչների ներկայացվածության սկզբունքով: **(Տե՛ս նկ.1)**:

Հարցազրույցներին մասնակցած երեսունութ (38) հարցվողներից երեսունչորսը (34) եղել են 19-ից 60 տարեկան կանայք, եւ միայն չորսը (4)՝ 20-ից 67 տարեկան տղամարդիկ:

Նկ. 1



Սեռերի ներգրավման նման անհամաչափությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարցազրույցների կազմակերպման եւ իրականացման ժամանակահատվածում (2020թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներ) ԼՂ բնակավայրերից տեղահանված եւ Հայաստանում ապաստանած բնակչության մեջ մեծաթիվ էին կանայք, անչափահաս երեխաները եւ ծերերը, իսկ երիտասարդ եւ միջին տարիքի տղամարդիկ հիմնականում գտնվում էին

Լեռնային Ղարաբաղում՝ ռազմական գործողություններին մասնակցելու կամ զինվորական ծառայության (այդ թվում՝ ժամկետային եւ պայմանագրային) մեջ լինելու նպատակով:

Ֆոկուս խմբերի մասնակիցներից տասնմեկը (11) եղել են անձինք, որոնց նախկին բնակավայրերը հարցման անցկացման պահին գտնվել են հայկական կողմի վերահսկողության ներքո, սակայն այն բանից հետո, երբ դեկտեմբերի 13-ին ադրբեջանական կողմը հարձակում է նախաձեռնել Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Հին Թաղեր եւ Խծաբերդ գյուղերի ուղղությամբ եւ ամրացել այդ բնակավայրերում՝ խախտելով նոյեմբերի 9-ին ստորագրված եռակողմ հայտարարության պահանջները, վերոհիշյալ երկու գյուղերը հայկական վերահսկողությունից դուրս են հայտնվել Ռուսաստանի հրապարակած՝ խաղաղապահների վերահսկողության նոր քարտեզում: Այսպիսով՝ վերոհիշյալ տասնմեկ (11) անձանցից եւս մեկի (1) բնակավայրը հայտնվել է հայկական կողմի վերահսկողությունից դուրս: **(Տե՛ս նկ.2)**:

Նկ. 2

Ձեր բնակավայրն այժմ գտնվում է հայկական, թե՞ ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության ներքո:



Ուսումնասիրության արդյունքները

Հարցազրույցները ցույց են տալիս, որ հենց պատերազմի առաջին օրերին ԼՂ բնակիչները հիմնականում սեփական միջոցներով կազմակերպել են ընտանիքների տարհանումը, այդ թվում՝ մասնավորապես՝ կանանց եւ անչափահաս երեխաների: Տղամարդիկ հիմնականում մնացել են Լեռնային Ղարաբաղում՝ աշխատանքով կամ ծառայությամբ պայմանավորված (այդ թվում՝ պայմանագրային եւ ժամկետային զինվորական ծառայության), ոմանք էլ ընտանիքը Հայաստան տեղափոխելուց հետո անմիջապես վերադարձել են իրենց աշխատանքին կամ կամավորագրվել են ռազմական գործողություններին մասնակցելու համար: Հարցումներից ակնհայտ է դառնում, որ ռազմական գործողությունների սկզբնական շրջանում առավել ավագ սերնդի ներկայացուցիչներին Լեռնային Ղարաբաղից Հայաստան տեղափոխելու միտում չի եղել, ինչը պայմանավորված է եղել այն մտայնությամբ, որ ռազմական գործողությունները հնարավոր է՝ կարճաժամկետ բնույթ ունենան: Ուստի ծերերին, անհարմարություն չպատճառելու նպատակով, հիմնականում տեղավորել են ապաստարաններում: Այդուհանդերձ, պատերազմական գործողությունների ընդլայնվելուն զուգընթաց վերջիններս նույնպես տարհանվել են:

Տարհանվածների հիմնական մասը ընտանիքների տեղափոխումը կազմակերպել են սեփական կամ բարեկամին, ընկերոջը պատկանող մեքենաներով: Հազվադեպ են եղել այն դեպքերը, երբ համայնքի բնակիչների տարհանումը կազմակերպվել եւ իրականացվել է վարչական մարմնի կամ համայնքի ղեկավարի կողմից. հարցումների արդյունքում գրանցվել է միայն մեկ դեպք, երբ համայնքապետը, տեղակացված լինելով հնարավոր հարձակման մասին, նախապես՝ սեպտեմբերի 26-ին, հավանաբար սեփական նախաձեռնությամբ՝ կազմակերպել եւ համակարգված կերպով տարհանել է գյուղի շուրջ հիսուն (50) բնակչի՝ վերջիններիս Վարդենիս հասցնելով սեփական «Ուրալ» մեքենայով (Շահումյանի շրջան, գյուղ Չարեքտար):

Եղել են դեպքեր, երբ մարդիկ սեփական միջոցներով հասել են Հայաստանի Հանրապետության սահման, հիմնականում՝ Վարդենիս եւ Գորիս քաղաքներ, որտեղից նրանց տեղափոխումը (հիմնականում հանրապետության մայրաքաղաք) իրականացվել է միկրոավտոբուսներով՝ կամավորական սկզբունքով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ հարցվողներից երկուսի (2) վկայությամբ՝ իրենց 17 եւ 18 տարեկան (տեղահանման պահին չզորակոչված) արական սեռի հարազատներին տարհանման ժամանակ չի թույլատրվել հատել Լեռնային Ղարաբաղի սահմանը: Հարցվող կանանցից մեկը փորձել է ԼՂ պաշտպանության նախարարությունից պարզել վերոհիշյալ արգելքի հիմքը:

Ըստ կնոջ՝ իրեն պատասխանել են, որ «այն ներքին կարգով կայացված որոշում է, որի համաձայն գոնե այդ տարիքի տղաները պետք է մնան Արցախում, որ անհրաժեշտության դեպքում պաշտպանեն իրենց տունը»:

Հարցվողների գերակշռող մասը կարողացել է մինչեւ տարհանումն իր հետ վերցնել անձը հաստատող փաստաթղթեր, երեխաների ծննդյան վկայականներ, սակայն միայն նրանցից կեսին է հաջողվել վերցնել այլ տիպի փաստաթղթեր (այդ թվում՝ սեփականության վկայական, դիպլոմ, վարորդական իրավունք եւ այլն), ինչպես նաեւ՝ մեկ-երկու հագուստ: Հարցվողների մեծ մասին չի հաջողվել իրենց հետ վերցնել թանկարժեք իրեր, գումար, եւ միայն երկուսն (2) են կարողացել տարհանել որոշակի կենցաղային իրեր: Քաղաքացիները նշում են՝ բացի այն հանգամանքը, որ ռազմական գործողությունները եւ կրակն այնպիսի ուժգնություն ունեին, որը թույլ էր տալիս մտածել միայն մարդկային կյանքը փրկելու մասին, առկա էր նաեւ այն մտայնությունը, թե այս անգամ եւս հնարավոր է՝ ռազմական գործողությունները լինեն կարճատեւ, եւ որ իրենք շուտով կվերադառնան իրենց բնականոն կյանքին, ինչպես դա պատահել է 2016թ-ի ապրիլյան քառօրյայի պարագայում:

Հատկանշական է նաեւ այն հանգամանքը, որ հարցվողների գրեթե մեկ քառորդը նշել է, որ փաստաթղթերը միշտ պահել են մեկ վայրում՝ պայուսակի մեջ, քանի որ միշտ եղել է մի օր բնակավայրը լքելու անհրաժեշտության երկյուղը, քանզի պատերազմի վերսկսման հավանականությունը միշտ մտավախության առարկա է եղել:

«Ես փաստաթղթերը միշտ պահում էի մեկ պայուսակի մեջ, ու երբ սկսվեցին կրակոցները, պայուսակը փվեցի աղջկաս ու ասեցի՝ ինչ էլ որ լինի, այն երբեք չկորցնես: Ես շատ լավ եմ հիշում 1992թ.-ը, երբ ես՝ այն ժամանակ դեռ փոքր աղջիկ երեխա, մեր տանից դուրս եկա՝ գրկած փաստաթղթերով պայուսակը, որ մայրս էր ինձ փվել», - պատմում է Մատաղիսից տարհանված կանանցից մեկը:

Հարցվողներից քսաներեքը (23) նշել են, որ դուրս գալու պահին իրենց բնակարաններն ու տները հիմնականում վնասներ չեն կրել: Ոմանց մոտ միայն մեքենաներն են վնասվել պայթյունից, սակայն մեծ մասի մոտ մեքենաները եւս անվնաս են մնացել: Հարկ է նշել, որ այս հարցվողներից երկուսն (2) ապրել են վարձակալված բնակարաններում, իսկ տասնութի (18) բնակության վայրն անցել է ադրբեջանական ուժերի վերահսկողության տակ: Բնակավայրը լքելուց հետո նրանք այլեւս տեղեկություն չեն ունեցել, թե ինչ վիճակում է գտնվում իրենց գույքը: **(Տես նկ.3)**:

Հարցվողներից ութ (8) հոգի նշել է, որ դուրս գալու պահին իրենց բնակարանները, մեքենան եւ այլ գույք արդեն իսկ քանդված, կիսաքանդ

կամ վնասված վիճակում է եղել: Ընդորում, վերջիններից միայն երեքի (3) բնակության վայրն է մնացել հայկական կողմի վերահսկողության ներքո, որոնցից մեկը պատերազմի պահին բնակվել է Ստեփանակերտում՝ վարձակալվող բնակարանում:

Հարցվողներից յոթն (7) ասել են, որ իրենց բնակարաններն ամբողջովին ավիրված են: Սակավաթիվ են այն դեպքերը, երբ մեքենաներն անվնաս են մնացել (միայն չորս (4) հարցվողի պարագայում): Այս մարդկանցից միայն երկուսի (2) բնակության վայրն է այժմ գտնվում հայկական կողմի վերահսկողության ներքո:

Նկ. 3

Ձեր բնակավայրից դուրս գալու պահին ի՞նչ վիճակում է գտնվել Ձեր բնակարանը:



Հարցվողները նշել են, որ հարցման պահի դրությամբ (հարցումներն անց են կացվել 2020թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին) իրենք դեռեւս ոչ մի փոխհատուցում կամ աջակցություն չեն ստացել կորցրած սեփականության դիմաց:

Հարցին, թե արդյո՞ք որեւէ պետական կառույցի կողմից պարզաբանվել է իրենց կարգավիճակը եւ տրվել է համապատասխան փաստաթուղթ, բոլոր հարցվողների պատասխանը բացասական էր: Վերջիններս նշեցին, որ միայն հրավիրվել են մարզպետարաններ, որոշ դեպքերում նաեւ՝ քաղաքապետարաններ եւ գյուղապետարաններ, որտեղ գրանցել են իրենց տվյալները սննդի, հիգիենայի պարագաների եւ հագուստի աջակցություն ցուցաբերելու նպատակով, ինչպես նաեւ առաջարկվել է անհրաժեշտության դեպքում օգտվել հոգեբանի ծառայություններից:

Հարցվողներից տասնմեկի (11) ընտանիքներում եղել են անդամներ, ովքեր

ռազմական գործողությունների արդյունքում ստացել են թեթեւ եւ միջին ծանրության վիրավորում, եւ միայն մեկը (1) կորցրել է ամուսնուն: **(Տե՛ս նկ.4)**:

Նկ. 4

Արդյո՞ք ունեք ռազմական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած կամ մահացած ազգական:



Բոլոր թեթեւ վիրավորում ստացած անձանց առաջին բուժօգնություն է ցուցաբերվել հենց ԼՂ բուժհաստատություններում, իսկ առավել ծանր դեպքերում մարդիկ տեղափոխվել են Գորիս, այնուհետեւ Երեւան, որտեղ վերջիններիս ցուցաբերվել է պատշաճ եւ լիարժեք բժշկական օգնություն: Հարցազրույցների մասնակիցները նշեցին, որ բոլոր վիրահատությունները եւ այլ տիպի բժշկական աջակցությունները, այդ թվում՝ սնունդը եւ անհրաժեշտ դեղորայքը, հիվանդանոցներում տրամադրվել են անվճար:

Գրեթե բոլոր հարցվողների մոտ դիտարկվել են սթրեսային եւ տագնապային իրավիճակներ, նյարդային դյուրագրգիռություն եւ հոգեկան ընկճվածություն: Մասնակից կանանցից ոմանք նշել են, որ ունեցել են անգամ ֆիզիոլոգիական խնդիրներ՝ ճնշման կտրուկ տատանումներ, ջերմության առկայություն: Շատերի մոտ նաեւ հստակ արտահայտված է եղել անքնությունը: Երեխաների մոտ առկա են եղել հիմնականում դյուրագրգիռություն, ձայներից եւ մթությունից վախ, հոգեկան ընկճվածություն, առանձին դեպքերում՝ հիշողության հետ կապված խնդիրներ, ուշաթափություն եւ գիշերամիզություն:

Ըստ հարցվողներից մեկի՝ ամեն ինչ այնքան արագ է կատարվել (նկատի ուներ ռազմական գործողությունների սկիզբը եւ մարդկանց տարհանումը),

որ երեխաներից շատերն անգամ չեն հասցրել ամբողջապես ընկալել, թե ինչ է կատարվում: Նա նաեւ ավելացրեց, որ իր դիտարկմամբ՝ իր 17-ամյա որդին այդ ընթացքում կարողացել է հաղթահարել արյան հանդեպ նախկինում ունեցած վախը, քանի որ աշխատելով զինվորական ճաշարանում՝ պատերազմի օրերին բազմաթիվ վիրավորների է տեսել եւ անգամ կարողացել է վերջիններիս օգնություն ցուցաբերել:

Հարցման պահին տեղահանված ընտանիքների անդամ հանդիսացող տղամարդիկ, տարաբնույթ հանգամանքներով պայմանավորված, դեռեւս գտնվում էին Արցախում: Այն փոքրաթիվ դեպքերում, երբ տղամարդիկ արդեն վերամիավորվել էին իրենց ընտանիքների հետ, կանայք տղամարդկանց մոտ եւս նկատել են մի շարք խնդիրներ, այդ թվում՝ նյարդային լարվածություն, դյուրագրգիռություն: Ոմանք նաեւ նշեցին, որ տղամարդիկ դարձել են լռակյաց, ավելի ինքնամփոփ, չեն ցանկանում ընտանիքի հետ խոսել կատարվածի մասին, եւ որ վերջիններս նյարդայնանում են անգամ ամենաչնչին ձայնից եւ ունեն անքնություն:

Հատկանշական է այն փաստը, որ մարզպետարանների կողմից առաջարկվող հոգեբանի ծառայություններից ոչ ոք չի ցանկացել օգտվել հարցման պահի դրությամբ: Դա, ըստ էության, ունի սոցիալ-մշակութային հիմքեր, քանի որ հայկական մշակույթում ընտանիքի անդամի անգամ հոգեկան առողջությանն առնչվող խնդիրները գերադասվում են լուծվել հենց ընտանիքի ներսում, սեփական ուժերով՝ խուսափելով տեսանելիությունից եւ հանրային քննարկան առիթ դառնալուց՝ անկախ այն հանգամանքից, թե նման խնդիրների ծագման համար ինչպիսի գործոններ են պատճառ հանդիսացել:

Հարցվողներից միայն երեքը (3) նշեցին, որ անցնելով Կովիդ-19-ի թեսթ, ունեցել են դրական պատասխան եւ ստացել են համապատասխան բժշկական աջակցություն:

Հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ հարցվողները առողջապահական համակարգին եւ անհրաժեշտ բուժօգնությանն առնչվող խնդիրների երբեք չեն բախվել: Ընդորում, դիտարկված բոլոր դեպքերում բուժօգնությունը տրամադրվել է անվճար թե՛ պետական, թե՛ մասնավոր բուժհաստատություններում:

Հարցվողների շրջանում սննդի հետ կապված կարիք եւս առանձնապես չի առաջացել, քանի որ սննդի տրամադրումը կազմակերպվել է ոչ միայն մարզպետարանների եւ համայնքապետարանների կողմից, այլեւ այս հարցում մեծ է եղել նաեւ սփյուռքահայության եւ ՀՀ ազգաբնակչության աջակցությունը, հատկապես՝ այն բնակավայրերի բնակիչների, որտեղ ապաստան են գտել Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք:

Հարցվողների հիմնական մասը նաեւ խնդիր չի ունեցել դպրոցահասակ երեխաներին իրենց ապաստանած համայնքների դպրոցներում տեղավորելու հարցում: Ոմանք նաեւ նշեցին, որ երեխաներին տեղավորել են դպրոցում

անգամ անձը հաստատող փաստաթղթերի բացակայության պայմաններում, ինչպես նաեւ նրանց տրամադրել են անհրաժեշտ գրքեր եւ գրենական պիտույքներ: Եղել են դեպքեր, երբ երեխաները գրական հայերենի ընկալման հետ կապված որոշակի դժվարություններ են ունեցել դասապրոցեսի ընթացքում, սակայն ուսուցիչները պատրաստակամություն են հայտնել հավելյալ պարապմունքներ անցկացնել վերոհիշյալ ընտանիքների երեխաների հետ:

Հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ պատերազմի եւ տեղահանման արդյունքում մարդիկ հիմնականում կորցրել են իրենց աշխատանքն ու ապրուստի միջոցները կամ հայտնվել են աշխատանքը կորցնելու վտանգի առջեւ, ինչի հիմնական պատճառը իրենց նախկին բնակավայրերի՝ ադրբեջանական կողմի վերահսկողության տակ անցնելն է, որտեղ տեղահանվածները վարել են սեփական տնտեսություն, զբաղվել են այգեգործությամբ, անասնապահությամբ, կամ այնտեղ է գտնվել վերջիններիս աշխատավարը: **(Տե՛ս նկ.5)**: Հարցվողներից ոչ ոք Հայաստանի Հանրապետության տարածքում դեռեւս ոչ մի տիպի տնտեսական գործունեությամբ չի զբաղվում: Ներկա պահի դրությամբ հարցվողներից միայն տասնչորսն (14) են, որ դեռեւս պահպանում են իրենց աշխատանքը Լեռնային Ղարաբաղում, եւ ում եկամտի աղբյուրը հանդիսանում է իրենց կամ ընտանիքի մեկ այլ անդամի աշխատավարձը: Հարցվողներից չորս (4) անձ նշել է, որ կորցրել է աշխատանքը տեղահանման արդյունքում, իսկ տասներեքի (13) ֆինանսական միջոցները գոյանում են նպաստից կամ կենսաթոշակից: Միայն յոթն (7) են նշել, որ հարցման պահի դրությամբ չունեն եկամտի որեւէ աղբյուր:

Նկ. 5

Հարցվողների եկամտի աղբյուրը



Հարցվողներից ոչ ոք ներգրավված չի եղել տնտեսական կամ կամավորական բնույթի այլ աշխատանքներում, բացառությամբ մեկի, ով իր դպրոցահասակ եղբոր հետ միասին ներգրավված է եղել դպրոցում կամավորական, այն է՝ բանակի համար ցանցի հյուսման աշխատանքներում:

Հարցվող կանանցից մի քանիսը նշեցին, որ Լոռու մարզպետարանի միջնորդությամբ աշխատանքի առաջարկ են ստացել խմորեղենի եւ «Գլորիա» կարի արտադրական միավորումից, սակայն չեն կարողացել անցնել աշխատանքի, քանի որ բազմազավակ մայրեր են, եւ հիմնականում իրենք են զբաղվում երեխաների խնամքով: Ըստ հարցվող կանանց՝ «Հայ մայրեր» բարեգործական հասարակական կազմակերպությունը, կրկին Լոռու մարզպետարանի միջոցով, առաջարկել է հավաքագրել կանանց ու դասընթացներ կազմակերպել բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են տնտեսական գործունեությամբ զբաղվել եւ ձեռք բերել համապատասխան հմտություններ, այդուհանդերձ, ինչպես ավելացրին կանայք, այդ ուղղությամբ դեռեւս գործնական քայլեր չեն ձեռնարկվել հարցման պահի դրությամբ:

Հարզազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ մինչեւ հարցումներն իրականացնելու պահը Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք առերեսվել են իրավական եւ սոցիալական ոլորտի մի շարք խնդիրների: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցություններից օգտվելու համար առցանց դիմումներ ներկայացնելիս՝ առաջացել են խնդիրներ այն պատճառով, որ պետական ռեգիստրում տվյալների բացակայության պատճառով համակարգը չի ճանաչել քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերի տվյալները, ինչի արդյունքում հայտի ներկայացումը դարձել է անհնարին, մասնավորապես՝ անչափահաս երեխաների տվյալները մուտքագրելիս:

Վերոհիշյալ խնդիրների լուծման համար քաղաքացիներին առաջարկվել է կամ գնալ ԼՂ, կամ տվյալները համակարգում գրանցելու համար ներկայացնել գրավոր դիմումներ, սակայն այդ դիմումների պատասխանները ստացվում են տեւական ժամանակահատվածում, մինչդեռ սոցիալական աջակցության ծրագրերին դիմելու համար սահմանված է վերջնաժամկետ, որի առկայության պայմաններում առաջանում է սոցիալական աջակցություն ստանալուց զրկվելու վտանգը:

Սոցիալական բնույթի հարցերի շարքում առկա են եղել պատերազմի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում ծննդաբերած կանանց հետծննդյան գումարներ ստանալու, ինչպես նաեւ անչափահաս երեխաների հաշվառման հետ կապված հարցեր:

Հարցվողների շրջանում եղել է տրանսպորտային միջոցի գույքահարկի վճարմանը եւ զրոյական տեղեկանք ստանալուն առնչվող խնդիր, քանի որ համայնքը, որտեղ հաշվառված է եղել տրանսպորտային միջոցը, անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ: Մեկ այլ քաղաքացի ունեցել է ալիմենտի գանձման հետ կապված խնդիր:

Հարցվողների մեծ մասը նաեւ նշեցին, որ իրենց կողմից բարձրաձայնվել է կումունալ վճարումների հետ կապված աջակցություն ստանալու կամ վճարները զեղչելու հարցը: Այս կապակցությամբ՝ վերջիններս հիմնականում դիմել են իրենց բնակավայրերի համայնքապետարաններին, սակայն սպառիչ պատասխան չեն ստացել, քանի որ տեղում հայտնել են, որ այդ հարցի պարզաբանումն իրենց լիազորության շրջանակներում չէ:

Հարցին, թե արդյոք մտադիր են հարցվողները վերադառնալ իրենց նախկին բնակավայրեր, եթե այն գտնվում է հայկական կողմի վերահսկողության տակ, կամ բնակության հաստատել ԼՂ մեկ այլ բնակավայրում, ունեցել ենք հետեւյալ պատկերը. հարցվողներից միայն վեց (6) մարդ է նշել, որ ընտանիքը պատրաստվում է վերադառնալ նախկին բնակավայր: Չորսը (4) նշել են, որ կվերադառնան այն պարագայում, եթե պետությունը Լեռնային Ղարաբաղի այլ բնակավայրում տուն կառուցի ու տրամադրի իրենց: Չորս (4) հոգի ասել է, որ կգնան միայն Ստեփանակերտ, քանի որ Լեռնային Ղարաբաղը չորս կողմից շրջափակված է, եւ ցանկացած այլ վայրում առկա է անվտանգության խնդիրը:

> *«Համոզված չենք, որ մի օր չեն գա մեր տուն ու մեզ չեն սպանի», - իր մտահոգությունն է հայտնում հարցվողներից մեկը:*

Ընդորում, վերջին երկու (2) խումբը բնակության վայրը կորցրած մարդիկ են:

Հարցվողներից տասնվեց (16) մարդ պատասխանել է, որ իրենց հետագա անելիքները դեռեւս հստակ չեն: Այս մարդկանցից շատերը նշում են, որ խիստ անհանգստանում են երեխաների անվտանգության համար, եւ որ Լեռնային Ղարաբաղի ցանկացած բնակավայր այլեւս անվտանգ չէ, քանի որ անգամ Ստեփանակերտն է շրջափակման մեջ հայտնվել: Հարցվողներից մեկը (1) նշել է, որ բանակցությունների միջոցով գոնե Շուշիի եւ Հադրութի շրջանները հետագայում վերադարձնելու հնարավորության դեպքում գուցե փոքր-ինչ անվտանգ կլինի, եւ վերադառնալու ցանկություն կլինի: Ոմանք գտնում են, որ դեռեւս ամեն վայրկյան իրենց նախկին բնակավայրը ռմբակոծվելու վտանգի տակ է: Մարդկանց այս խմբի մոտ առավելապես գերակշռող է այն տեսակետը, որ անգամ հայկական ուժերի վերահսկողության տակ մնացած բնակավայրերն այնքան մոտ են ադրբեջանական բնակավայրերին, եւ վերջիններիս դիրքերն այնքան նպաստավոր են դրանք իրենց վերահսկողության տակ պահելու համար, որ անվտանգության հարցը դառնում է թիվ մեկ կանխիչ պատճառը վերադառնալու մասին մտածելու համար: Ընդորում, այս խմբում կան Ստեփանակերտի բնակիչներ, ովքեր եւս նպատակահարմար չեն գտնում վերադառնալը: Պատճառները տարաբնույթ են. երեխաների համար պատշաճ կրթություն ապահովելու հնարավորության բացակայությունից մինչեւ առողջապահական ոլորտի հարցեր:

Հետաքրքրական է նաեւ հարցվողներից մեկի պատասխանը, ըստ որի՝ աշխատանքով պայմանավորված՝ վերջինս ու նրա ամուսինը կվերադառնան Լեռնային Ղարաբաղ, բայց երեխաներին չեն տանի իրենց հետ. եւս մեկ տուն կգնեն Հայաստանի գյուղերից մեկում եւ կփորձեն ապրել երկու վայրում:

Չորս (4) հարցվող պատասխանել են, որ իրենք բացարձակապես ոչ մի պարագայում երեխաներին այլեւս Լեռնային Ղարաբաղ չեն տանի:

> *«Եթե անգամ ծնողներս էլ վերադառնան, ես Հայաստանից ոչ մի տեղ չեմ գնա», - ասում է հացվողներից մեկը:*

> *«Ես ինքս արդեն չորրորդ անգամ եմ փախստական դառնում: Եթե ամեն անգամ պետք է տուն կառուցեմ, այգի տնկեմ, բայց չհասցնեմ բերք ու բարիքից օգտվել, երբեք այլևս չեմ վերադառնա», - ասում է կանանցից մեկը:*

Հարցվողներից երեք (3) կին նշում են, որ իրենց հետագա բնակության վայրի ընտրությունը մեծապես պայմանավորված է ամուսնու աշխատանքի վայրով: Կանայք ասում են, որ կվերադառնան այնտեղ, որտեղ աշխատանք կլինի, հատկապես այն պարագայում, որ Հայաստանում այսօր աշխատանք գտնելը բավականին բարդ է: Ընդորում, վերջիններս այն մարդիկ են, ում բնակավայրն անցել է ադրբեջանական ուժերի վերահսկողության ներքո: **(Տես նկ.6)**:

Նկ. 6

Մտադիր եք արդյոք վերադառնալ Ձեր նախկին բնակավայր կամ մեկ այլ վայր ԼՂ տարածքում:



Ինչ վերաբերում է համակեցությանն առնչվող հարցին, մասնակիցներից երեսուներկուսը (32) պատասխանել են, որ հայ եւ ադրբեջանցի ազգերը չեն կարող ապրել միմյանց հետ հարեւանությամբ: Ըստ հարցվողների՝ հայկական կողմի համար կան ավելի շատ հիմնավոր պատճառներ չվստահելու ադրբեջանցիներին, հատկապես այն ամենից հետո, ինչ մարդիկ վերապրել են 2016թ-ի ու հատկապես 2020թ-ի վերջին պատերազմի ընթացքում: Նման կարծիքի հիմնավորման համար առավելապես հիմք են հանդիսանում մարդկանց գերեվարման, գլխատման, գերիների հետ վատ վերաբերմունքի ու ինքնասիրությունը վիրավորող այն տեսանյութերը, որոնք ադրբեջանցի օգտատերերն ակտիվորեն տարածում են համացանցում:

Հարցվողներից չորս (4) մարդ ասել է, որ դժվարանում է միանշանակ պատասխանել հարցին: Ոմանց կարծիքով՝ համակեցությունը ցայսօր հնարավոր չի եղել, իսկ հետագայի մասին խոսել դժվարանում են: Ոմանք նշել են՝ այժմ անհնար է համատեղ ապրելը, սակայն գուցե 2-3 սերունդ հետո դա հնարավոր դառնա: Մեկը (1) նշել է, որ թեեւ հիմա դժվար է ասել, բայց պետք չէ ոչինչ բացառել: Հարցվողներից մեկ (1) հոգի հրաժարվել է պատասխանել հարցին, եւ միայն մեկն (1) է նշել, որ հնարավոր է: **(Տես նկ.7)**:

Նկ. 7

Արդյո՞ք հնարավոր եք համարում հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների համատեղ կեցությունը:



Հարցվողներից տասնմեկը (11) գտնում են, որ պատերազմը կարող է լինել այն ճանապարհը, որով կլուծվի հակամարտությունը եւ կհստակեցվի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Նրանցից շատերի պնդմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե այն տեղի կունենա 3 տարի անց կամ ավելի ուշ, պատերազմն անխուսափելի է:

Հատկանշական է, որ Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորումը պատերազմական ճանապարհով տեսնող մարդիկ հավատացած են, որ այս անգամ պատերազմ լինելու է Ադրբեջանի եւ Ռուսաստանի միջեւ: Անգամ եթե ոչ անմիջականորեն Ռուսաստանի մասնակցությամբ, ապա՝ Ռուսաստանի աջակցությամբ:

«Ռուսաստանն այսքան փոքր տարածքով չի բավարարվի: Ինձ թվում է, որ առաջին հերթին ինքը (Ռուսաստանը) կմտածի իր սահմանների անվտանգության մասին: Այնպես որ, իմ կարծիքով, պատերազմը դեռ առջևում է»,- նշում է հարցվողներից մեկը:

Հարցման մեկ այլ մասնակցի պնդմամբ՝ ոչ մի հայրենասեր մարդ չի կարող համակերպվել Լեռնային Ղարաբաղի նման սահմանների ու կարգավիճակի հետ, անգամ եթե միջազգայնորեն ճանաչվի նրա անկախությունը:

«Առնվազն Շուշին, Հադրութը, Լաչինը, Քարվաճառը պիտի լինեն Արցախի սահմաններում, այնպես ինչպես 1992թ-ին էր գոնե: Սա կարող է լինել միայն պատերազմի միջոցով, սակայն արդեն Ռուսաստանի միջամտությամբ: Դրանից հետո, ճիշտ է, մենք արդեն կլինենք իր (Ռուսաստանի) կազմում, իր տիրապետության տակ»,- նշում է մասնակիցը:

Հարցվողներից մեկի համար «անընդունելի եւ անազնիվ» է այն հանգամանքը, որ ադրբեջանական բոլոր յոթ շրջանները վերադարձվում են նոյեմբերի 10-ի զինադադարի համաձայնագրով, անգամ այն տարածքները, որոնք չեն անցել ադրբեջանական վերահսկողության տակ վերջին պատերազմի ընթացքում (նկատի ունի Շահումյանի եւ Քաշաթաղի շրջանները, Աղդամը), սակայն հայկական կողմից դրանց դիմաց Շուշին, Մարտունու մի մասը եւ Հադրութը վերադարձնելու մասին հարց չի բարձրացվում:

Մեկ այլ մասնակցի պնդմամբ՝ պատերազմն անխուսափելի է, եւ այս անգամ, եթե նույնիսկ հայկական կողմին աջակցի Ռուսաստանը, ապա Ադրբեջանին էլ անպայման կսատարի Թուրքիան:

«Քանի որ երկու պետություններն էլ հզոր են իրենց մարդկային ու ռազմական ռեսուրսներով, ինձ թվում է՝ այս բախումը կհանգեցնի համաշխարհային պատերազմի»,- եզրահանգում է հարցման մասնակիցը:

Հարցման մասնակիցներից տասնհինգը (15) կարծում են, որ դիվանագիտական ճանապարհով հնարավոր է եւ հարկավոր է լուծել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը:

Նրանց կարծիքով՝ ապագայում պատերազմն ինչ տեսք էլ՝ ունենա, ում միջեւ էլ՝ ընթանա, մեծապես տուժող կողմերը լինելու են Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը, քանի որ կրկին ռազմական գործողություններն այս տարածքում են ընթանալու, ու կրկին հայ մարդիկ են զոհվելու:

«Մենք երեք սերունդ արդեն զոհել ենք պատերազմում: Եթե կրկին պատերազմ լինի, կարող ենք միանգամից հանձնվել թուրքին ու վերջ էլի», - ասում է հարցվողներից մեկը:

Հատկանշական է սակայն, որ վերոհիշյալ խմբերը, ունենալով տարբեր մոտեցումներ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ, գտնում են, որ իրերի նման դրությունը չի կարող գոհացնել ոչ մի հայի: Խնդիրը Լեռնային Ղարաբաղի վարչական սահմանների մեջ է: Ֆոկուս խմբերի մասնակիցները գտնում են, որ թե՛ պատերազմական, թե՛ դիվանագիտական ճանապարհով, պետք է փորձել վերականգնել գոնե նախկին ԼՂԻՄ-ի վարչական տարածքը:

«Ես պատերազմ չեմ ուզում. դա սարսափելի կլինի: Սակայն գոնե բանակցություններով տարածքների մի մասը վերադարձվի: Ղարաբաղը մտնի Ռուսաստանի կազմի մեջ: Ասված տա, Հայաստանն էլ մտնի ու մի քիչ նորմալ ապրենք: Այսպես, թե այնպես հայերի 80 տոկոսն արդեն ապրում է Ռուսաստանում», - նշում է հարցվողներից մեկը:

Միաժամանակ կան մարդիկ, որ պնդում են, որ ԼՂ սահմաններից դուրս չեն կարող մնալ Շահումյանի եւ Քաշաթաղի շրջանները, քանի որ դրանք եւս համարվում են Լեռնային Ղարաբաղի պատմական եւ կենսական տարածք, որոնք նաեւ անվտանգության երաշխիքներ են սահմանային առումով:

Հարցվողներից տասնմեկը (11) դժվարացել է պատասխանել, եւ միայն մեկն է, որ չի ցանկացել պատասխանել հարցին, թե ինչպես են պատկերացնում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը եւ կարգավիճակի հստակեցումը: **(Տե՛ս նկ.8)**: Ընդորում, վերոհիշյալ 11 հարցվողներից 8-ը նշել է, որ ընդհանրապես պատկերացում չունի, թե ինչպես պետք է կարգավորվի հարցը, իսկ 3-ն ասել են, որ հարցը գուցեեւ ժամանակի ընթացքում լուծում ստանա, բայց իրենք չեն պատկերացնում՝ ինչ ճանապարհով, քանի որ երեսուն տարի շարունակ Լեռնային Ղարաբաղը միջազգային ճանաչում չի ստացել, եւ սրանից հետո էլ քիչ հավանական է, որ կճանաչվի. ամեն մի պետություն իր շահից ելնելով է գործում, իսկ ներկայիս ստեղծված քաոսը Ռուսաստանի շնորհիվ է:

«Թե ռուսին, թե միջազգային հանրությանը Արցախը պետք է առանց մարդկանց, քանի որ սարերում ոսկի կա: Հիմա ռուսն իր շահի համար կօգնի: Արցախի հարցը չի լուծվի: Արցախը կովախնձոր է. պարզապես պետք է կարողանանք մեր գոյությունը պահպանել», - ընդգծում է հարցվողներից մեկը:

«Հայն իր ամբողջ կյանքում պայքարել է իր անկախության համար... ես դեմ եմ Ռուսաստանի կազմի մեջ մտնելուն: Եթե

հիմա ոռուսն ասում է, որ եկել է մեզ օգնելու, դա այդպես չէ. իր շահի համար է անում ամեն ինչ: Եթե այդքան հեշտ լիներ խաղաղությունը...», - նշում է հարցվող կանանցից մեկ ուրիշը:

Նկ. 8

ԼՂ հակամարտության վերջնական կարգավորումը տեղի է ունենալու բանակցային, թե պատերազմական ճանապարհով:



Հարցին, թե որոնք են այն հիմնական խնդիրները, որոնց հարցվողներն առերեսվել են կամ հնարավոր է՝ կառերեսվեն որպես կին կամ տղամարդ, հարցման մասնակիցների կեսը (տասնինը (19) մարդ) ընդգծել է անվտանգության հարցը, ընդորում՝ կարեւորելով հիմնականում գոյաբանական անվտանգությունը: Հարցման մասնակից կանայք՝ որպես մայր եւ կին, հիմնականում շեշտել են իրենց երեխաների եւ ընտանիքի ֆիզիկական անվտանգության մասին մտահոգությունը, խոսել են Լեռնային Ղարաբաղում մի բնակավայրից մյուսը գնալիս կամ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ կապող Բերձորի (Լաչինի) ճանապարհով անցնելիս հնարավոր վտանգների վերաբերյալ:

Միայն կանանցից մեկն (1) է շեշտադրել գենդերային առումով անվտանգության խնդիրը՝ նշելով, որ իրեն հիմնականում անհանգստացնում են ադրբեջանցիների կողմից հնարավոր սեռական ոտնձգությունների վտանգը, քանի որ իր կարծիքով՝ կարող է իր համար ռիսկային լինել, օրինակ՝ երեկոյան ժամերին աշխատանքից միայնակ տուն վերադառնալը՝ պատճառաբանելով, որ Լեռնային Ղարաբաղում ապրելու են ադրբեջանական բնակավայրերի հետ անմիջական հարեւանությամբ:

Կանանց մի խումբը մտահոգություն է հայտնել այն մասին, որ չի կարողանում գտնվել ամուսնու կողքին ու հոգ տանել վերջինիս մասին:

Կանանցից մեկը նշել է, թե իր համար ամենաէական խնդիրն ընտանիքի մասնատվածությունն է: Վերջինիս կարծիքով՝ ամեն ինչ կարելի է վերականգնել, կրկին կառուցել, բայց ցավալի է, երբ աշխատանքի եւ

հանգամանքների բերումով երեխաներն այստեղ են՝ Հայաստանում, իսկ ամուսինը մնացել է Լեռնային Ղարաբաղում եւ չի կարող տեսնել, թե ինչպես են մեծանում իրենց երեխաները:

Հարցման մասնակիցներից ութը (8) նշել են, որ իրենց անհանգստացնող ամենամեծ խնդիրն անորոշությունն է: Հարցվողները հիմնականում խոսել են այն մասին, որ թողնելով կամ կորցնելով տարիների ստեղծածը՝ այժմ անորոշության մեջ են՝ մտորելով, թե ինչպիսին է լինելու իրենց հետագա ճակատագիրը: Հարցվողներից ութն (8) ասել են, որ դժվարանում են առանձնացնել կոնկրետ խնդիրներ, քանի որ դրանք բազմաթիվ են:

> *«Հարմարվում ենք այս իրավիճակին, միայն թե ընտանիքի անդամներն առողջ լինեն: Միայն ամենօրյա հացի հարց ենք լուծում այժմ», - ասում են կանայք:*

Երկուսը (2) նշել են, որ որպես կին՝ իրենց համար կարեւոր խնդիր է անձնական տարածքի բացակայությունը, հատկապես այն պարագայում, երբ այժմ ստիպված են ապրել մեծ թվով ազգականների հետ, առավել եւս՝ բարեկամների տանը: **(Տես նկ.9)**:

Նկ. 9

Որո՞նք են այն խնդիրները, որոնց հետ Դուք առերեսվում եք/հնարավոր է՝ կառերեսվեք որպես կին/տղամարդ/երիտասարդ:



Եզրակացություններ

Այսպիսով՝ սույն ուսումնասիրության արդյունքում, դիտարկել ենք հետեւյալ պատկերը:

Սկսած պատերազմի առաջին օրվանից մինչեւ նոյեմբերի 10-ը համաձայնագրի կնքումը, իսկ դրանից հետո նաեւ ադրբեջանական վերահսկողությանը հանձնվելիք տարածքներից Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության տարհանումը մեծապես կազմակերպվել եւ իրականացվել է ընտանիքների արական սեռի ներկայացուցիչների կողմից: Տղամարդիկ կանանց եւ երեխաներին, քիչ ավելի ուշ՝ նաեւ ծերերին, հիմնականում իրենց սեփական միջոցներով կամ բարեկամների աջակցությամբ տեղափոխել են Հայաստանի Հանրապետության սահման, հիմնականում՝ Գորիս եւ Վարդենիս քաղաքներ կամ ՀՀ տարբեր բնակավայրեր, որից հետո իրենք վերադարձել են Լեռնային Ղարաբաղ: **Այսպիսով՝ տարհանումը կազմակերպելու հարցում պետական մարմինների դերակատարումը մեր կողմից դիտարկված դեպքերում հասնում է նվազագույնի:**

Հարցազրույցներից պարզ է դարձել, որ տարհանված անձինք հիմնականում կարողացել են մինչեւ տարհանումն իրենց հետ վերցնել իրենց եւ ընտանիքի մյուս անդամների անձը հաստատող փաստաթղթերը, սակայն քչերին է հաջողվել վերցնել նաեւ այլ տիպի փաստթղթեր, այդ թվում՝ սեփականության վկայական, դիպլոմ, վարորդական իրավունք եւ այլն: **Գրեթե ոչ ոքի չի հաջողվել իր հետ վերցնել թանկարժեք իրեր, գումար, բավարար քանակությամբ անհրաժեշտ հագուստ: Միեւնույն ժամանակ, հարցվողները նշել են, որ գումարը գլխավորապես պահում են բանկի քարտային հաշվին, իսկ քարտերը հիմնականում պահպանվել են:**

Հարցվող ընտանիքներից ոչ ոք հարցման պահի դրությամբ դեռեւս չէր ստացել փոխհատուցում կորցրած կամ վնասված սեփականության դիմաց՝ չնայած, որ եղել էին բանավոր խոստումներ կամ միջանձնային խոսակցություններ հնարավոր փոխհատուցման կամ նոր բնակարան տրամադրելու մասին: *Այնուամենայնիվ, սույն թվականի նոյեմբերի 22-ին ուժի մեջ է մտել ՀՀ կառավարության որոշումը պատերազմական գործողությունների հետեւանքով Ադրբեջանի վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառված քաղաքացիների աջակցության միջոցառման մասին, որի նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել պատերազմի հետեւանքով տեղահանված եւ փաստացի Հայաստանում կամ Լեռնային Ղարաբաղում գտնվող ԼՂ քաղաքացիներին, որոնք ունեն վերոնշյալ տարածքների համայնքների հաշվառում եւ մինչեւ 2020 թ-ի սեպտեմբերի 27-ը՝ պատերազմի սկսման օրը, առնվազն վերջին 3 ամիսը փաստացի բնակվել են այնտեղ: Սոցիալական աջակցությունը տրամադրվելու է միանվագ դրամական օգնության ձեւով՝ յուրաքանչյուր շահառուի համար 300 հազար դրամ:*

Հարցազրույցներից պարզ է դարձել նաեւ, որ պատերազմի արդյունքում տեղահանված անձանց որեւէ կարգավիճակ եւ այդ կարգավիճակն ամրագրող որեւէ փաստաթուղթ չի տրվել պատկան մարմինների կողմից:

Հարցման մասնակիներից տասնմեկի (11) ընտանիքներից վիրավորում ստացած մարդիկ առաջին բուժօգնություն ստացել են Լեռնային Ղարաբաղի բուժհաստատություններում: Առավել ծանր վիրավորում ունեցող անձինք տեղափոխվել են Հայաստանի Հանրապետության բուժհաստատություններ: **Ըստ հարցվողների պատասխանների՝ բոլոր անհրաժեշտ բուժումները, վիրահատություններն ու խնամքն իրականացվել են անվճար ՀՀ ցանկացած բուժհաստատությունում:**

Հարկ է նշել, որ ընտանիքի անդամին՝ ամուսնուն կորցրած միակ հարցվողը հարցման պահի դրությամբ դեռեւս չէր ստացել որեւէ պետական աջակցություն:

Հոգեբանական խնդիրների մասին հարցվողներն ավելի դժվարությամբ էին խոսում, սակայն ստեղծված վստահության մթնոլորտը եւ այն հանգամանքը, որ չորս (4) խմբերից երեքում (3) մասնակիցները բացառապես կանայք էին, հնարավորություն ընձեռեց վերհանել բազմաթիվ հոգեբանական խնդիրներ, որոնց հետ բախվել էին թե՛ իրենք՝ հարցվողները, եւ թե՛ նրանց ընտանիքների գրեթե բոլոր անդամները: **Որպես կանոն՝ գրեթե բոլորն իրենց եւ ընտանիքի մյուս անդամների մոտ դիտարկել են հոգեբանական խնդիրներ, այդ թվում՝ վախ ձայներից, նյարդային գրգռվածություն, տագնապային վիճակ, անհանգստություն, առանձին դեպքերում՝ վախ մթությունից, գիշերամիզություն, ուշաթափություն, ֆիզիոլոգիական խնդիրներ, լռակյացություն եւ այլն: Չնայած թվարկված հոգեբանական խնդիրների առկայությանը եւ դրանց բազմազանությանը՝ հարցվողներից որեւէ մեկը չի ցանկացել օգտվել առաջարկվող հոգեբանի ծառայություններից: Հիմնականում նման առաջարկներ նրանք ստացել են տեղափոխման առաջին օրերին, առանձին դեպքերում՝ նաեւ դպրոցներում երեխաներին տեղավորելիս:**

Հարցումները ցույց են տվել, որ տեղահանված անձինք հիմնականում չեն ունեցել խնդիր կամ կարիք՝ կապված սննդի, առաջին անհրաժեշտության հիգիենայի պարագաների ու հագուստի հայթայթման, ինչպես նաեւ դպրոցահասակ երեխաներին իրենց ապաստանած վայրերի դպրոցներում տեղավորելու հետ: **Սննդի, առաջին անհրաժեշտության պարագաների եւ հագուստի հարցերով առաջին օգնությունը կազմակերպվել եւ իրականացվել է մարզպետարանների, հաճախ նաեւ՝ համայնքապետարանների կողմից: Զգալի է եղել նաեւ ՀՀ ազգաբնակչության եւ սփյուռքահայերի աջակցությունը:**

Դպրոցներում երեխաների տեղավորման հետ կապված եւս խնդիրներ չեն առաջացել: **Ըստ էության՝ համայնքներում դպրոցների տնօրինության**

եւ ուսուցչական անձնակազմի կողմից ստեղծվել է համապատասխան միջավայր Լեռնային Ղարաբաղից տեղահանված դպրոցականներին ինտեգրելու ուղղությամբ: Երեխաներն ապահովվել են անհրաժեշտ գրքերով եւ գրենական պիտույքներով:

Հարցումներից պարզ դարձավ, որ տարհանվածների համար կարեւորագույն խնդիրից մեկը աշխատանքի եւ կեցության պայմանների համար անհրաժեշտ միջոցների հայթայթման հարցն է:

Դիտարկումները ցույց են տվել, որ տեղահանված անձանց մոտ իրենց ներկայիս բնակության վայրում ծագել են սոցիալական ոլորտի հարցերին առնչվող մի շարք խնդիրներ, **որոնց թվում եղել են հիմնականում Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցությունից օգտվելու համար առցանց դիմումներ ներկայացնելու միջոցները, ցանցում իրենց ընտանիքի որոշ անդամների տվյալների բացակայությունը, աջակցություն ստանալու համար դիմումների ներկայացման ժամկետները, ասել է թե՝ սոցիալական աջակցության ծրագրերին դիմելու համար սահմանված ոչ ողջամիտ վերջնաժամկետ, ինչի պարագայում առկա է սոցիալական աջակցություն ստանալուց զրկվելու վտանգ:**

Ֆոկուս խմբային հարցազրույցները ցույց են տալիս, որ Լեռնային Ղարաբաղ վերադառնալ ցանկացողների թիվն այնքան էլ մեծ չէ, եւ որ մարդիկ վստահորեն չեն կարողանում կայացնել իրենց վերադարձի որոշումը: **Հարցվողներից միայն տասը (10) ընտանիք է ցանկություն հայտնել վերադառնալու Լեռնային Ղարաբաղի իրենց նախկին բնակավայր կամ մեկ այլ բնակավայր: Ընդորում, նրանց թվում են թե՛ ընտանիքներ, ում բնակության վայրը մնացել է հայկական կողմի վերահսկողության տակ, թե՛ ընտանիքներ, ում բնակության վայրն անցել է ադրբեջանական կողմի վերահսկողության տակ:**

Տասնհինգ (15) ընտանիք դեռեւս անորոշ վիճակում է եւ հստակ չի պատկերացնում, թե որտեղ եւ ինչպես է շարունակելու ապրել: Վերջիններս հիմնականում այն մարդիկ են, ովքեր կորցրել են բնակության վայրը եւ աշխատանքը: **Ընդորում, Հայաստանում չհիմնավորվելու հիմնական պատճառը մարդկանց մոտ պայմանավորված է աշխատանք գտնելու բարդությամբ եւ բնակարանի բացակայությամբ:**

Հարցվողներից միայն չորսն (4) են հստակ որոշել այլեւս երեխաներին Լեռնային Ղարաբաղ չտանել՝ համոզված լինելով, որ խաղաղությունը հնարավոր չէ մոտ ապագայում, եւ որ պատերազմն ամեն վայրկյան կարող է վերսկսվել: Հատկանշական է, որ վերադառնալ չցանկացողների կամ դեռեւս տատանվողների մոտ գերակշռող է այն մտայնությունը, որ անվտանգությունն այլեւս խաթարված է, եւ ապագայի հանդեպ վստահություն չկա: Վստահություն չկա նաեւ անմիջականորեն հարեւանությամբ ապրող ադրբեջանցիների

հանդեպ: **Հարցազրույցների մասնակիցների կարծիքով՝ անգամ հայկական կողմի վերահսկողության տակ մնացած տարածքերում պատշաճ անվտանգություն հնարավոր չէ ապահովել բնակչության համար:**

Կան նաեւ մտահոգություններ, որ Լեռնային Ղարաբաղում նման պայմաններում դեռեւս երկար ժամանակ անհնար է ապահովել որակյալ կրթություն եւ առողջապահական պատշաճ ծառայություններ, ինչն այս պահին թերեւս կարեւորագույն կարիքներից մեկն է պատերազմի արդյունքում բազմաթիվ վիրավորումներ ստացած, ֆիզիկական եւ հոգեբանական աջակցության կարիք ունեցող հազարավոր մարդկանց համար:

Որոշ ընտանիքների մոտ վերադառնալ կամ չվերադառնալու հարցը պայմանավորված է այնտեղ աշխատանք գտնելու հնարավորությամբ:

Հարցվողների գերակշիռ մասը գտնում է, որ հայ եւ ադրբեջանցի ազգերն այլեւս չեն կարող ապրել համատեղ կամ միմյանց հարեւանությամբ: **Հարցվող երեսունութ (38) մարդուց երեսուներկուսը (32) կարծում են, որ դա այլեւս անհնար է, քանի որ կա խորը անվստահություն եւ տարիներով կուտակված ատելություն ու թշնամանք միմյանց հանդեպ:**

Միայն հարցվողներից մի քանիսն են նշել որ, կարծում են՝ գուցե ժամանակի ընթացքում (2-3 սերունդ հետո) այս երկու ազգերը կկարողանան ապրել միմյանց հարեւանությամբ: Միայն մեկն (1) է համոզված նշել, թե համատեղ ապրելը հնարավոր է:

Հարցվողների գրեթե մեկ քառորդը՝ տասը (10) մարդ, գտնում են, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը հնարավոր է լուծել ռազմական ճանապարհով, եւ որ իրենց համար պատերազմը ընդունելի ճանապարհ է: Հատկանշական է, որ մարդկանց այս խումբը որպես պատերազմող կողմ է ընկալում նաեւ Ռուսաստանին, քանի որ Լեռնային Ղարաբաղն այլեւս ընկալում են Ռուսատանի ազդեցության գոտի:

Հարցվողներից տասնհինգ (15) մարդ անընդունելի է համարում պատերազմական ուղին՝ գտնելով, որ հակամարտությունը կարող է կարգավորվել դիվանագիտական ճանապարհով: Այս խմբին պատկանող մարդիկ գտնում են, որ հայկական կողմն այլեւս չունի ռեսուրսներ պատերազմ վարելու համար, եւ որ պատերազմը անդառնալի հետեւանքներ կարող է ունենալ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի համար:

Ուշագրավ է, որ վերոհիշյալ երկու խմբին հարող մարդիկ դեմ չեն Ռուսաստանի ազդեցության մեծացմանը տարածաշրջանում, հատկապես՝ Լեռնային Ղարաբաղում, եւ ընդունելի են համարում դիտարկել վերջինիս որպես ինքնավար մարզ Ռուսաստանի կազմում:

Հարցազրույցների տասնմեկ (11) մասնակից, պատկերացում չունեն, թե ինչպես կարող է կարգավորվել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը: Այս խմբի մոտ կա թերահավատություն այն առումով, որ հակամարտությունը չի կարգավորվել տասնամյակների ընթացքում ու այսուհետ եւս հազիվ թե կարգավորվի, քանի որ չկա միջազգային հանրության կամքն առ այդ: Նրանց կարծիքով՝ այդ հակամարտությունը ստեղծվել եւ պահվում է հզոր ու ազդեցիկ խաղացողների կողմից որպես խաղաքարտ միմյանց հետ ավելի գլոբալ հարցերի շուրջ սակարկելու համար: **Այդ խմբին հարող մարդիկ ընդհանրապես դեմ են ռուսական ազդեցության մեծացմանը, քանի որ գտնում են, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում հիմնական մեղավորը Ռուսաստանն է: Վերջիններիս մոտ չկա վստահություն Ռուսաստանի եւ նրա վարած քաղաքականության հանդեպ:**

Եվ վերջապես, հարցումները ցույց են տվել, որ տեղահանված անձանց անհանգստացնող ամենաարդիական խնդիրները կապված են իրենց եւ իրենց ընտանիքների գոյաբանական անվտանգությանն առնչվող հարցերի եւ իրենց ներկայի ու ապագայի անորոշության հետ: Նշանակալից է այն հանգամանքը, որ թեեւ սոցիալական խնդիրների եւ բարեկեցության վերաբերյալ հարցվողները ուղղակիորեն չէին բարձրաձայնում, այնուամենայնիվ ակնհայտ էր, որ մարդանց հուզող առաջնային խնդիրների շարքում են Հայաստանում աշխատանք գտնելու հետ կապված դժվարությունները եւ զբաղվածության հարցը:

Առաջարկություններ

Հաշվի առնելով սույն ուսումնասիրության շրջանակներում պատերազմի հետեւանքով տեղահանված անձանց կարիքների ուսումասիրությունը եւ դրա արդյունքում կատարված եզրահանգումները՝ ներկայացնում ենք հետեւյալ առաջարկությունները, որոնց կյանքի կոչմանն ուղղված աշխատանքներում էական նշանակություն ունի թե՛ քաղաքացիական հասարակության եւ թե՛ պետական մարմինների ներգրավվածությունը.

- սահմանել 2020թ-ի պատերազմի հետեւանքով Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց իրավական կարգավիճակը՝ պետության (այս պարագայում՝ Հայաստանի Հանրապետության) եւ վերջիններիս միջեւ իրավահարաբերությունները, ինչպես նաեւ տեղահանված անձանց հանդեպ պետության պարտավորությունները հստակեցնելու նպատակով,
- ջանքեր գործադրել՝ բավարարելու պատերազմի հետեւանքով տեղահանվածների սոցիալական կարիքները՝ ապահովելով վերջիններիս աշխատանքով կամ տնտեսական զբաղվածությամբ՝ դրանով իսկ թեթեւացնելով թե՛ պետության սոցիալական պարտավորության բեռը եւ թե՛ տեղահանվածների սոցիալական ծանր վիճակը,
- ձեռնարկել համակարգային միջոցներ՝ իրավիճակի գենդերային ասպեկտների ուսումնասիրության ուղղությամբ,
- մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմների կիրառմամբ փորձել վերականգնել Լեռնային Ղարաբաղի պատերազմի արդյունքում տուժած անձանց իրավունքները,
- վերապատրաստել մասնագետների, որոնք կաշխատեն տեղահանված ընտանիքների երեխաների կարողությունների զարգացման եւ նոր բնակության վայրերում արագ ինտեգրվելու ուղղությամբ,
- կազմակերպել եւ անցկացնել հոգեկան առողջության կարեւորության վերաբերյալ իրազեկման աշխատանքներ, որպեսզի մարդիկ չխուսափեն օգտվել հոգեբանի ծառայությունից,
- մշակել եւ իրականացնել հաշտեցման, անցումային արդարադատության եւ հոգեցնցումների (տրավմաների) հետ աշխատանքի երկարաժամկետ ու բազմակողմանի ծրագրեր տեղահանված ընտանիքների անդամների մասնակցությամբ,
- մշակել եւ իրականացնել պատերազմի հետեւանով տեղահանված կանանց եւ երիտասարդների հզորացման եւ ներուժի բացահայտման ծրագրեր, կազմակերպել ձեռներեցության կարողությունների զարգացման դասընթացներ, առանձնապես՝ տեղահանված կանանց խմբերի ներգրավվածությամբ,
- պատերազմի հետեւանով տեղահանված անձանց տրամադրել անվճար իրավական եւ սոցիալական խորհրդատվական աջակցություն:

© 2021. Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպության կողմից:
Հարցերի համար դիմել Մարիաննա Խաժակյանին,
էլ. հասցե՝ khazhakyan.marianna@peacedialogue.am: